ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1957 Общественные науки

Ա. Մուրվալյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՃԱՌԱԿԵՐՊ ԲԱՅԵՐԸ

Բայի սեռերի մեջ պատճառական կերպի բայերը հատուկ տեղ են գրավում: Դրանք ուրույն բարդություն ու դժվարություն են ներկայացնում իրենց քերականական, ձևաբանական տարբեր դրսևորումներով, իրենց առումներով ու ընդգրկումով:

Հայտնի է, որ պատճառական բայեր տերմինը և նրա հասկացությունն առաջին անգամ ճիշտ կերպով տվեց Մ. Աբեղյանը դեռևս 1906 թվականին իր դպրոցական քերականության մեջ[1]: Դրանից հետո նա այդ բանը ընդգծել իր շարահյուսության դասագրքում[2]: Այնուհետև, հետագա քերականությունների մեջ Աբեղյանի հիշյալ տերմինը կամ հասկացությունը հաստատված է այնպես, ինչպես, օրինակ, այսօր է[3]:

Պատճառական բայեր տերմինը թեև Աբեղյանինն է պատկանում, բայց այդ բայերի հասկացությունն ու ըմբռնումը եղել է նաև նրանից շատ առաջ «անցողական» կամ «ներգործական» ընդհանուր տերմինի տակ: Այսպես՝ դեռ Ա. Այտընյանի՝ «Անցողական կրավի բայ մ'որ ուրիշին բան մ'ընել տալ կը նշանակէ. ինչպես խմցընել (խմել տալ). ճաշակցնել»[4]: Տվյալ հասկացության արտահայտիչը Ս. Պալասանյանը համարում է «զն մասնիկը, որ չեզոք բայից ներգործական է կազմում. խաղալ — խաղացնել, չորանալ — չորացնել, իսկ ներգործական բայից կրկին ներգործական կամ անցողական. մոռանալ — մոռացնել, սովորել — սովորեցնել»[5] և այլն:

Այսպես՝ անցողական կամ ներգործական բայեր, որպես պատճառական բայերի անվանումներ, բուն տերմինների նշանակությամբ, ճիշտ չեն գործածված. դրանք, որպես քերականական տարբեր հասկացություններ, Մ. Աբեղյանի քերականությունից առաջ իրարից սահմանազատված չեն եղել: Այդ սահմանազատումը Աբեղյանի մոտ միանգամայն ցայտուն է, որի հիման վրա էլ որոշակիություն կա բայի սեռերի, այդ թվում նաև պատճառական բայերի մեջ:

Պատճառական սեռի բայը, ինչպես հայտնի է, ցույց է տալիս, որ ենթական գործողությունը կատարել է տալիս մեկ ուրիշին, կամ այդ ուրիշի գործողության կամ եղելության փոփոխման պատճառն ինքն է (ենթական):

---

[1] Տե՛ս նրա «Աշխարհաբարի քերականություն», Վաղարշապատ, 1906:

[2] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 19—27: Նույնը ավելի ուշ նաև նրա «Հայոց լեզվի տեսություն» գրքում, Երևան, 1931, էջ 302—303:

[3] Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք V և VI դասարանների համար, Հայպետհրատ, 1951, էջ 250:

[4] Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա 1866, էջ 89:

Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1874, էջ 139:

Պատճառականի ձևանիշն է -ցն (-ացն, -եցն): Սա ավելանալով մեծ մասամբ չեզոք բայերին՝ պարձնում է անցողական-պատճառական ձևեր, հակառակ իրենց հիմք հանդիսացող չեզոք բայերի, ինչպես որ են, օրինակ, կորչել և կորցնել: Առաջինը չեզոք բայ է և չի պահանջում ուղղակի խնդիր («կորչել ինքն իրենց»), իսկ երկրորդն առաջինի անցողական-պատճառական ձևն է և պահանջում է ուղղակի խնդիր («կորցնել մի բան»):

Հարանման օրինակներ են՝ հանգչել և հանգցնել, դիպչել և դիպցնել, մանել և մացնել, վերանալ և վերացնել, բարձրանալ և բարձրացնել, իջնել և իջեցնել, մոտենալ և մոտեցնել, զբաղվել և զբաղեցնել և նման այլ բազմաթիվ ձևեր:

Այս նույն ածանցով պատճառական ձևեր են կազմվում նաև մի շարք հարադիր բայերից, կամ որոշ կարգի դարձվածքային արտահայտություններից: Դրանցից են, օրինակ, վեր կենալ—վեր կացնել, վեր թռչել—վեր թռցնել, ետ դառնալ—ետ դարձնել, կամ՝ ետ վերադառնալ («Կյանքը ետ վերադառնար տասը տարով», էջ 188)- ետ վերադարձնել («դա նրան ետ չես վերադարձնի», էջ 188)[1], ետ կանգնել—ետ կանգնեցնել, ներս մտնել—ներս մղցնել, դուրս փախչել—դուրս փախցնել, ոտի կանգնել—ոտի կանգնեցնել, մարով անցկենալ—մարով անցկացնել, գլխին նստել—գլխին նստեցնել և այլն[2]:

Գրական մեր նոր հայերենի պատճառականի -ցն (-ացն, -եցն) ածանցը ծագումով հին է՝ լինելով գրաբար -ուցան (-ացուցան, -եցուցան) ածանցի հնչյունափոխված ձևը: Այսպես, օրինակ, ամրանալ բայի անցողական-պատճառականն է ամրացնել, իսկ սրա հին ձևն է ամրացուցանել. նոալ բայի անցողական-պատճառականն է նոացնել, իսկ սրա հին ձևն է նոացուցանել. աճել բայի անցողական-պատճառականն է աճեցնել. իսկ սրա հին ձևն է աճեցուցանել. թռչել բայի անցողական-պատճառականն է թռցնել, իսկ սրա հին ձևն է թռուցանել[3]:

Այսպես են նաև՝ ամաչեցնել (հին՝ ամաչեցուցանել), ամուսնացնել (հին՝ ամուսնացուցանել), անմահացնել (հին՝ անմահացուցանել), աշխատեցնել (հին՝ աշխատեցուցանել), ապրեցնել (հին՝ ապրեցուցանել), առողջացնել (հին՝ առողջացուցանել), բազմացնել (հին՝ բազմացուցանել), բազմեցնել (հին՝ բազմեցուցանել), գալարեցնել (հին՝ գալարեցուցանել կամ գալարացուցանել), դարձնել (հին՝ դարձուցանել), զրաղեցնել (հին՝ զրաղեցուցանել և այլն, և այլն[4]:

Սրանք հատկապես չեզոք բայեր են, որոնցից սովորաբար կազմվում են անցողական-պատճառական ձևեր:

Որոշ անցողական բայերն էլ կարող են ստանալ նույն -ցն (-ացն, -եցն) ածանցը և դառնալ կրկնակի անցողական-պատճառական ձևեր: Նման բայաձևեր պահանջում են սովորաբար երկու ուղղակի խնդիր, այսպես, օրինակ

---

[1] Ն. Ցարյան, Հացավան, Երևան, 1955:

[2] Նման դեպքերում հարադիր բառերը մեծ մասամբ գրված են բուն բայերի կողքին: Պարզ է, որ այդ բառերը սովորաբար գործ են ածվում նաև առանձին (առանց այդ հարադիր բառերի), ինչպես, օրինակ, բարձրանալ -բարձրացնել, թռչել—թռցնել, դառնալ—դարձնել և այսպես նաև մյուս բոլոր օրինակները:

[3] Տե՛ս Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»:

[4] Տե՛ս նույն բառարանը:

«դաս սովորել», բայց՝ «աշակերտին դաս սովորեցնել». «գիրք կարդալ», բայց՝ «մարդկանց գիրք կարդացնել» և այլն։ Այս կարգի օրինակներից են՝ «Այս հարցը Ղազարյանին հիշեցրեց մանկության մի դեպք» (Զ. 43), «Վասակը հայացքով (այդ բանը) հասկացրեց Լևոնին» (Զ. 374), «Պոզոսին քարտիզար չի ուտեցնում» (Զ. 504) և այլն։

Անցողական բայից կազմված պատճառական ձևերն են նաև՝ արածեցնել, զգացնել, իմացնել, լափեցնել, խմեցնել, խոստովանեցնել, ծծեցնել, հագցնել, հանձնեցնել, մարսեցնել, մոռացնել, շահեցնել, պարտավորեցնել և այլն։

Հիշյալ անցողական-պատճառական բայերի զգալի մասը ունեցել է և՝ հին ձևեր՝ -ուցան (-ացուցան, -եցուցան) ածանցով։ Այդ հին ձևերն են՝ սովորեցուցանել «սովորեցնել», յիշեցուցանել «հիշեցնել», զգացուցանել «զգացնել», իմացուցանել «իմացնել», խոստովանեցուցանել «խոստովանեցնել», մոռացուցանել «մոռացնել», շահեցուցանել «շահեցնել, շահել տալ», պարտաւորեցուցանել «պարտավորեցնել» և այլն։

Պատճառական որոշ հին ձևերի դիմաց գրական նոր հայերենում սովորական գործածական չեն նրանց հնչյունափոխված նոր ձևերը (-ուցան>-ցն)։ Իրանց դիմաց արդի հայերենում մեծ մասամբ պատահում են նրանց նկարագրական ձևերը (տալ բայի հարադրությամբ)։ Այսպես, օրինակ, հին լսեցուցանել—նոր լսեցնել, բայց սրա տեղը այսօր սովորաբար գործ է ածվում լսել տալ. հին թորեցուցանել—նոր թորեցնել, բայց գործ է ածվում թորել տալ. հին գրգռեցուցանել—նոր գրգռեցնել, բայց գործ է ածվում գրգռել տալ. հին ծածանեցուցանել—նոր ծածանեցնել, բայց՝ ծածանել տալ։ Այսպես նաև՝ կարծեցուցանել «կարծել տալ», կարճեցուցանել «կարճել տալ», ճաշակեցուցանել «ճաշակել տալ», նշմարեցուցանել «նշմարել տալ», շարժեցուցանել «շարժել տալ», ողորկեցուցանել «ողորկել տալ», պառակտեցուցանել «պառակտել տալ», պատրաստեցուցանել «պատրաստել տալ», ստիպեցուցանել «ստիպել տալ» և այլն։

Անցողական-ներգործական բայերից կազմված պատճառական ձևերը, ըստ կանոնի, ինչպես ասացինք վերևում, արտահայտում են կրկնակի անցողականության իմաստ և ըստ այդմ էլ պահանջում են երկու ուղղակի խնդիր։

Այդպես չէ, սակայն, բոլոր դեպքերում։

Անցողական բայերից կազմված պատճառական շատ ձևեր, ինչպես կտեսնենք, ո՛չ կրկնակի անցողական իմաստ են արտահայտում և ո՛չ էլ երկու ուղղակի խնդիր են պահանջում։ Նմանօրինակ պատճառական ձևերը շատ անգամ իրենց բուն անցողական բայերի (այն բայերի, որոնցից կազմված են այդ պատճառական ձևերը), այսպես կոչված, կրկնակի կամ զուգակից ձևերն են։

Այսպես՝ ծնեցնել (հին՝ ծնեցուցանել) ձևը գործ է ածված «առաջ բերել, ծագեցնել» իմաստով, օրինակ՝ «Այդ մտածմունքը ծնեցնում էր նրա մեջ մի փոքր անախորժ զգացմունք...» (Պաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. II, Երևան, 1955, էջ 78) և այլն։[1]

Նման դեպքերում պատճառականի իմաստն այնքան է թուլանում, որ հաճախ այն իսպառ ջնջվում-վերանում է, հավասարվելով իրենց սկզբնական

---

[1] Թեև նույն հեղինակի մոտ պատահում է նաև ծնել ձևով՝ «Այդ գաղափարները... ծնեցին նրա գլխում երևակայական ցնորքներ» (նույն տեղում, էջ 54)։

(—անցողական) ձևերին։ Ահա այդ իմաստով էլ գործ են ածվել մի շարք պատճառական ձևեր։ Այսպես, օրինակ՝ շարժեցնել (հին՝ շարժեցուցանել) ձևը հանդես է եկել նույն «շարժել» իմաստով՝ «Ես տեսա մի խաչագող, որ ավանակի նման շարժեցնում էր իր ականջները» (Պաֆֆի, Ն. տ., էջ 305). խոռվեցնել (հին՝ խռովեցուցանել) ձևը նույն «խռովել» իմաստով՝ «Այդ մրտքերը սաստիկ խռովեցնում էին ինձ» (Պաֆֆի, Ն. տ. էջ 379). ճոճեցնել (հին՝ ճոճեցուցանել) ձևը՝ նույն «ճոճել» իմաստով՝ «...ճոճեցնելով փայտը բեռի հետ» (Վրթ. Փափազյան, Ընտիր երկեր, Երևան, 1951, էջ 11). դիզեցնել (հին՝ դիզեցուցանել) ձևը՝ նույն «դիզել» իմաստով՝ «տերևներն ու ճյուղերը միմյանց խառնելով՝ գլխին դիզացնում» (Վրթ. Փափազյան, Ն. տ., էջ 288) և այլն։

Նման զուգակից ձևերից են նաև՝ զայրակղել և զայրակղեցնել (հին՝ զայրակղեցուցանել). սեփականել և սեփականեցնել (հին՝ սեփականացուցանել). վրդովել և վրդովեցնել (հին՝ վրդովեցուցանել) կամ՝ խռովել և խռովեցնել (հին՝ խռովեցուցանել), վերականգնել և վերականգնեցնել և այլն։

Անցողական բայերից կազմված այն պատճառական ձևերը, որոնք երկու ուղղակի խնդիր չեն պահանջում, կա՛մ հնի ազդեցությամբ են գործածված նախասովետական շրջանի, մանավանդ 19-րդ դարի մեր գրողների ստեղծագործություններում, կա՛մ երբեմն էլ սխալ են ածանցված՝ հասկացվելով որպես չեզոք բայեր (մի տեսակ մթագնած լինելով ներգործականի իմաստը)։ Այդպիսի բայերից են (կրկնակի՝ զուգակից ձևերով)՝ խոնարհել և խոնարհեցնել (հին՝ խոնարհեցուցանել. «ոչ մի ազգի առաջ չեն խոնարհեցնում իրենց անպարտելի գլուխը»—Պաֆֆի, Ն. տ., էջ 317)[1]. պտտել և պտտեցնել («...պտտեցնում են իրենց իլիկը» — Պաֆֆի, Ն. տ., էջ 115)[2]. հնչել և հնչեցնել (հին՝ հնչեցուցանել. «այդ բոլորը... հնչեցնում էին հովվական կյանքի անմեղ և պարզ պոեզիան»—Պաֆֆի, Ն. տ., էջ 299). հպել և հպեցնել (հին՝ հպեցուցանել. «...շրթունքը հպեցնում էր քնողի երեսին»—Պաֆֆի, Ն. տ., էջ 370) և այլն։

Նման դեպքերում մեծ մասամբ, ինչպես նկատելի է, այսօր ընդունելի է սկզբնական (և ո՛չ՝ երկրորդական) ձևերի գործածությունը. այսպես՝ խոնարել (և ո՛չ՝ խոնարհեցնել), պտտել, հպել, շարժել, ճոճել, դիզել և այլն։

Այսպես նաև՝ հալել բայը, որ ներգործական սեռի բայ է, բայց այս ձևով հաճախ չի հանդիպում մեր գրողների մոտ։ Այս իմաստը սովորաբար արտահայտված է հալեցնել ձևով. օրինակ՝ «արևը հալեցնում էր ձյունը»

---

[1] Նույնը նաև այսօր՝ «Հովատակն իսկույն գլուխը խոնարհեցրեց» (տե՛ս Ռ. Թափալցյան. Ոսկե հովիտ, էջ 303)։

[2] Սրանք նույն «պտտել, դարձնել» իմաստով գործ են ածվում այսօր, որպես զուգակից ձևեր։ Օրինակ՝ Թափալցյանի նույն «Ոսկե հովիտ» վեպի մի պարբերության մեջ այդ երկու ձևը մեկը մյուսին փոխարինել է. այսպես՝ «Տիգրանը վերցրեց մոտորի արմընկաձև բռնակը և մի երեք-չորս անգամ ամրողջ թափով պտտեց։ Լսվեցին կցկտուր փոթփոթոցներ և մոտորը նորից լռեց։ Տիգրանը այս անգամ այնպես պտտեցրեց, որ տրակտորն օրորվեց» (էջ 108)։

[3] Օրինակ՝ Ն. Զարյանի «Հացավան» վեպում հալել, որպես ներգործական բայաձև, ոչ մի անգամ չի գործածված, փոխարենը պատահում է հալեցնել (պատճառական) ձևը։ Պատահում է, սակայն, հալել բայի կրավորականը՝ հալվել՝ «սառույցը արևի ջերմությունից արդեն սկսել էր հալվել» (էջ 17), այսպես նաև հետագա էջերում՝ 30, 115, 369 և այլն։

կամ՝ «իսպառ հալեցրեց ամեն կարգի փարիկանկատությունն» (Ն. Զարյան, ն. տ., էջ 537, 412). «Ահա արևը հալեցրել էր իմ մոմով կպցրած թևերս» (Վ. Փափազյան, ն. տ., էջ 388). «Գարնան արևը հալեցնում էր ձյունը Այուսարի...» (Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1955, էջ 31) և այլն, և այլն:

Նման դեպքերում առաջ են գալիս մի տեսակ ձևի և բովանդակության (ֆունկցիայի) խզում կամ հակասություն, երբ այս կամ այն անցողական բառը ձևով կրկնակի անցողական-պատճառական է (-ցն, -ացն կամ -եցն ածանցով), իսկ իմաստով կամ ֆունկցիայով՝ սովորական անցողական-ներգործական: Այս կարգի «կրկնակի» անցողական ձևերը ֆունկցիայով համընկնում են այն անցողական-ներգործական ձևերի հետ, որոնցից կազմված են դրանք (երբեմն իմաստի թեթև նրբերանգներով, հմմտ. վերևում բերված՝ խոնարհել—խոնարհեցնել, պտտել—պտտեցնել և այլն): Այդ բանն ավելի շոշափելի է մի շարք չեզոք (ընձայնական) բայերից կազմված պատճառական ձևերի մեջ, որ կտեսնենք քիչ հետո:

Ասացինք, որ սովորաբար չեզոք սեռի բայերից են կազմվում անցողական-պատճառական ձևերը: Բայց կան որոշ չեզոք բայեր, որոնցից անցողական-պատճառական ձևեր չեն կազմվում: Դրանք հատկապես այնպիսի բայեր են, որոնց անցողական-պատճառական ձևի կարիքը լեզվի մեջ չի զգացվում, կամ դրանց անցողական-պատճառական ձևը փոխարինվում է անցողական-ներգործական ուրիշ բայով, ինչպես, օրինակ՝ գալ—բերել, գնալ - տանել, (հմմտ. հասնել—հասցնել), ընկնել- գցել (հմմտ. իջնել—իջեցնել), ելնել (‖ դուրս գալ)—դուրս բերել, երևալ—ցույց տալ (կա և՝ երևացնել ձևը—հին՝ երևեցուցանել. «իրենց կարմրավուն ցոլքով երևացրել էին նրա ականջները»—Ա.Բ. 631, կամ՝ «մեջքի արծաթի գոտին երևացնում էր ճկուն մարմինը»—Ա.Ր. 665) և այլն[1], կամ էլ մի չեզոք բայը փոխարինվում է համարժեք մի այլ չեզոք բայով, որից և կազմվում է պատճառական ձևը, օր՝ լալ ‖ լացել—լացացնել և այլն:

Նման փոխարինումը սովորաբար շատ ցայտուն է դրսևորվում հարադրյալ բայերի կամ որոշ կարգի դարձվածքային արտահայտությունների մեջ, երբ, մի կողմից, կանգնած են արմատից կամ արմատական բառից անանցողական-չեզոք բայով կազմված հարադրյալ բայերը, որպես չեզոք (կամ երբեմն կրավորական) բայաձևեր, և մյուս կողմում, նույն արմատից կամ արմատական բառից անցողական-ներգործական բայով կազմված հարադրյալ բայերը, որպես անցողական-պատճառական բայաձևեր: Բերենք օրինակներ, այսպես՝ մահ գալ («գալիս են ըստեղերք մահ գալիս»—Մ. 87)՝ չեզոք և մահ ածել («տանում եմ շենը մահ ածեմ»—Մ. 87)՝ անցողական-ներգործական. հմմտ. շրջել և շրջեցնել («բարձրացրին Կամսարյանին դեպի առաստաղը և սկսան շրջեցնել դահլիճի շուրջը»—Մ. 12):

Այսպիսի օրինակներ շատ կան: Դրանից են՝ շուռ գալ («Արուսը շուռ եկավ»—Զ. 6) և շուռ բերել ‖ շուռ տալ («նա երեսը շուռ տվեց»—Զ. 270) կամ՝ շուռ ու մուռ գալ («շուռ ու մուռ էր գալիս անկողնում») և շուռ ու մուռ տալ («շուռ

---

[1] Ոչ միայն չեզոք բայերին, այլև անցողական-ներգործական բայերին էլ, երբեմն նրանց համարժեք պատճառականի համար նոր բառ է փոխարինում, օրինակ՝ տեսնել - տեսցնել, բայց վերջինիս համար սովորաբար գործ է ածվում ցույց տալ հարադրյալ բայը:

ու մոռ էր տալիս աչքի թերթերը»—Զ. 154). կուլ գնալ *(«Հացի պատառները կուլ չէին գնում»)* և կուլ տալ *(«կուլ էր տալիս... ծխախոտի ծուխը»—Զ. 158).* քաշ գալ ‖ քարշ գալ *(«ամբողջ օրը քարշ է գալիս»)* և քաշ տալ ‖ քարշ տալ *(«տրեխի թելը գետնին քաշ տալով»—Զ. 191, «քարշ տվեց դեպի տուն»—Զ. 28).* փուլ գալ *(«սիրտը փուլ եկավ»--Զ. 96)* և փուլ բերել ‖ փուլ տալ *(«—Ամեն մարդու ավելի հեշտ է փուլ տալ, քան ոտի կանգնեցնել»—Զ. 376).* շաղ գալ *(«մազերը շաղ եկան ճակատին»)* և շաղ տալ *(«գլուխ տվեց՝ կարճ խուզած մազերի փունջը շաղ տալով» Մ. 8).* հալ ու մաշ լինել *(«մոմի պես հալ ու մաշ եղավ»)* և հալ ու մաշ անել *(«հալ ու մաշ արիր»--Զ. 390).* տակն ու վրա լինել *(«Լեոնի հոգին տակն ու վրա եղավ»—Զ. 390)* և տակն ու վրա անել *(«շարունակում էր նա տակնուվրա անել կանաց սիրտը»—Զ. 71).* ուժասպառ լինել *(«մինչև որ ուժասպառ լինի»—Զ. 17)* և ուժասպառ անել *(«ձիուն ուժասպառ արեց»).* լույս աշխարհ գալ *(«մի օր լույս աշխարհ կգա»)* և լույս աշխարհ հանել *(«մի մասին բռնել ու լույս աշխարհ հանել»—Զ. 339).* զինաթափ լինել *(«Արտաշը զինաթափ եղավ»—Զ. 491)* և զինաթափ անել *(«դրանով նա զինաթափ էր անում Վասակին»—Զ. 537) և այլն:*

Այսպես են նաև բազմաթիվ այլ հարադրյալ բայեր, որոնք մեծ մասամբ կազմված են երկու բառից և հաճախ արտահայտում են մի բառի գաղափար և ունեն մի բառային արժեք: Սրանք սովորաբար փոխարինվում են ամբողջական բառերով, որոնք սեռի տեսակետից իրար հակադիր օրինակներ են, մի կողմում գտնվելով չեզոք կամ երբեմն կրավորական և մյուս կողմում պատճառական կամ երբեմն ներգործական բայերը:

Երկու բառից բաղկացած հարադրյալ բայերի առաջին եզրում լինում են տարբեր բառեր՝ ա) անունները *(մեծ մասամբ գոյական անունները), օրինակ, գլուխ գալ «հաջողվել» և գլուխ բերել «հաջողեցնել», գլխի ընկնել «հասկանալ» և գլխի գցել «հասկացնել», մարդու գնալ «ամուսնանալ» և մարդու տալ «ամուսնացնել», պար գալ «պարել» և պար ածել «պարեցնել» և նման այլ բազմաթիվ օրինակներ (ուր հիմնական նշանակությունը անուններն են արտահայտում, իսկ բայը մի տեսակ սպասարկու դերում է հանդես գալիս).*

բ) ետադրությունները կամ մակբայները և նման այլ բառեր, *օրինակ, ետ գալ «վերադառնալ» և ետ բերել «վերադարձնել», մոտ գալ «մոտենալ» և մոտ բերել «մոտեցնել», վայր իջնել (‖ վայր գալ) «իջնել» և վայր բերել «իջեցնել», ներս գնալ «մտնել» և ներս տանել «մտցնել» և այլն (ուր հիմնական նշանակությունը բայն է արտահայտում, իսկ հարադիր բառերը մի տեսակ օժանդակ դեր են կատարում).*

գ) մեծ մասամբ առանձին անգործածական բառարմատները *(հաճախ բայարմատները), օրինակ՝ եռ գալ «եռալ» և եռ տալ «եռացնել», փուլ գալ «փլվել, փլչել» և փուլ բերել «փլցնել», ման գալ «շրջել» և ման ածել «շրջեցնել» և այլն (ուր անունների նման հիմնական նշանակությունը բառարմատներն են արտահայտում) և այլն:*

Ինչպես երևում է վերևի օրինակներից, սրանք այնպիսի հարադրյալ բայեր են կամ որոշ կարգի դարձվածքային արտահայտություններ, որոնց փոխարինող պարզ բառերը, ինչպես նշեցինք, մեծ մասամբ լինում են չեզոք (կամ կրավորաձև չեզոք) և նրանցից կազմված անցողական-պատճառական

բայերը. այսպես՝ մարդու գնալ «ամուսնանալ» և մարդու տալ «ամուսնացնել», գլուխ գալ «հաջողվել» և գլուխ բերել «հաջողեցնել», ետ գալ «վերադառնալ» և ետ բերել «վերադարձնել», եռ գալ «եռալ» և եռ տալ «եռացնել» և այլ նման բազմաթիվ օրինակներ:

Ծանոթություն.—Բայց հիշյալ հարադրյալ բայերի մեջ պատահում են նաև կրավորական և նրա ներգործական ձևերը, ինչպես, օրինակ՝ սիրտ անել «խրախուսվել» և սիրտ տալ «խրախուսել», հալ ու մաշ լինել «հալվել ու մաշվել» և հալումաշ անել «հալել ու մաշել», ջարդուփշուր լինել «ջարդվել ու փշրվել» և ջարդուփշուր անել «ջարդել ու փշրել», գինարափ լինել «գինաթափվել» և գինարափ անել «գինաթափել», ցրիվ գալ «ցրվել» և ցրիվ տալ «ցրել» և այլն, որոնք, ինչպես տեսնում ենք, փոխարինում են արդեն ոչ թե չեզոք և նրանից կազմված անցողական-պատճառական ձևերին, այլ փաստորեն կրավորական և նրա ներգործական ձևերին: Նման հարադրյալ բայերն ու որոշ կարգի դարձվածքային արտահայտություններն արդեն պետք է կապել, բնականաբար, կրավորական-ներգործական ձևերի հետ:

Բացի չեզոք կամ կրավորական չեզոք բայերից (կամ՝ չեզոքի իմաստ արտահայտող հարադրյալ բայերից ու որոշ կարգի դարձվածքային արտահայտություններից), անցողական-ներգործական որոշ բայեր -ցն (-ացն, -եցն) ածանցի օգնությամբ, ինչպես տեսանք վերևում, տալիս են կրկնակի անցողական-պատճառական ձևեր, ինչպես, օրինակ՝ իմել—իմեցնել (նաև՝ իմել տալ), ուտել—ուտեցնել (նաև՝ ուտել տալ), հիշել—հիշեցնել (նաև՝ հիշել տալ), իմանալ—իմացնել (նաև՝ իմաց տալ), լսել—լսեցնել (նաև՝ լսել տալ, հին՝ լսեցուցանել. «լսեցնում էին ինձ յուրյանց երգերը»— Բ. 261), հավանել—հավանեցնել (=հավանել տալ. հին՝ հավանեցուցանել. «այստեղ չենք եկել մեզ հավանեցնելու...»—Փ. 398), կարդալ—կարդացնել (նաև՝ կարդալ տալ կամ կարդացնել տալ), զգալ—զգացնել (նաև՝ զգալ տալ, օրինակ՝ «աղքատի տան մեջ յուր ներկայությունը զգալ է տալիս»—Մ. 19 կամ՝ «դարձնան արևն իրեն արդեն զգալ էր տալիս»—Ակ. 64) և այլն[1]:

Անցողական-ներգործական բայերի պատճառական ձևերը մեծ մասամբ կազմվում են տալ բայի օժանդակությամբ (հարադրությամբ), տալով, այսպես ասած, պատճառականի նկարագրական ձևեր, ինչպես, օրինակ՝ գրել—գրել տալ, շինել—շինել տալ, կապել—կապել տալ, բացել—բացել տալ, նկարել—նկարել տալ, կառուցել—կառուցել տալ, կարդալ—կարդալ տալ, կամ՝ կարդացնել—կարդացնել տալ (կրկնակի ձևով՝ -ցն ածանցով և տալ բայով):

Հարանման օրինակներից են (նախադասությունների մեջ)՝ «երեկոյան

[1] -ցն (-ացն, -եցն) ածանցի էությունը բայի մեջ անցողականություն-պատճառականություն առաջ բերելն է, ինչպես, օրինակ, մի կողմից՝ եռալ—եռացնել (մի բան), վազել—վազեցնել (մեկին)... և մյուս կողմից՝ կպչել (մի բանի) և կպցնել (մի բանի՝ մի բան), հասնել (մի բանի կամ մեկին) և հասցնել (մի բանի կամ մեկին՝ մի բան) և այլն, ուր պատճառական ձևերը կազմվում են չեզոք կամ անանցողական բայերից և ձեռք են բերում անցողականություն: Պարզ է, որ այդ նույն ածանցը, հանդես գալով անցողական կամ ներգործական բայերի մեջ, անցողականության փոխարեն չի կարող անանցողականություն առաջ բերել: Անցողական բայերի մեջ էլ նմանապես անցողականություն առաջ բերելով՝ դարձնում է նրանց կրկնակի անցողական, ինչպես, օրինակ, ուտել (մի բան) և ուտեցնել (մի բան՝ մեկին), սովորել (մի բան) և սովորեցնել (մի բան՝ մեկին) և այլն, որոնք, կարծես թե, նմանվում են ուղղակի և անուղղակի խնդիրներ միաժամանակ ընդունող բայերին (ինչպիսին է, օրինակ, տալ բայը՝ տալ մի բան՝ մեկին): Սակայն այսպես պնդելու համար հարկավոր է ապացուցել, որ միևնույն -ցն ածանցը չեզոք բայերի հետ գործածվելիս անցողականություն է առաջ բերում, իսկ ներգործական բայերի մոտ անանցողականություն, որ անկարելի բան է:

փոքրիկ աղջկա գաշնամուրի վրա վարժությունն է անել տալիս» (Մ. 22), «երբ հարկ լինի, պարել տար ամենաամոթխած աղջիկներին» (Ա.Բ. 339), «մի քանի հարյուր գերան եղներով քաշել տա և...» (Ա.Բ. 465), «թե չէ առանրդ զրել կտամ» (Ա.Բ. 526), «ուսկոմի միջոցով ազատել կտանք» (Զ. 56), «Հավաքել տուր խոսք դեռնից» (Զ. 94), «գպրոցից հանել տվեց» (Զ. 143), «Նկարները ապազրել և տալիս թերթերում» (Զ. 224), «Ճաապ մերժնազրել տուր, թե՛ր...» (Զ. 226—7), «քո դեմ գիմում եկն զրել տվել» (Զ. 250), «...ու բազմիցս կրկնել տվել» (Զ. 260), «զողանալ չտաս» (Զ. 266), «...և ընդունել տալ Աշոտ Թահրապյանին վարչության որոշումը» (Զ. 298), «քննել և հաստատել տվեց Նոր Հայաստանում անեք շինելու բազմաթիվ գիմումները» (Զ. 385), «այդ բոլորը նա զցել և տվել իրենց կոլխոզի հաշվին» (Զ. 365), «Լևոնը կոլխոզի հաշվին կարել տվեց...» (Զ. 386), «Լևոնը լծել տվեց կառքն ու ֆուրգոնը» (Զ. 388), «ինչու խմել տվիր, կատաղեցրիր...» (Զ. 489), «իր ձեռքով սարքել տվեց բազմաթիվ ալպիսի փաստաթղթեր» (Զ. 554), «և զգալ էին տվել, որ...» (Զ. 516), ինչպես նաև (կրկնակի ձևով -ցն ածանցով և տալ բայով)՝ «բայց չէ որ Վասակը ինքն զգացնել չէր տալիս Լևոնին, թե...» (Զ. 287), «ամեն կերպ աշխատում էր մոռացնել տալ Լևոնին» (Զ. 336), «Պետք է նրան խոստովանեցնել տալ» (Զ. 478), «...այն գեպքում նրանց ճանկացնել կտանք» (Թ. 263) և նման այլ բազմաթիվ օրինակներ։

Այս օրինակներից էլ կարելի է տեսնել, որ տալ բայի գործածությունը շատ է տարածված անցողական բայերի մոտ, կազմելով կրկնակի անցողական-պատճառական նկարագրական ձևեր։ Դա անցողական բայերն են, մի կողմից, անցողական-ներգործական՝ գրել—գրել տալ, ալրել—ալրել տալ, ուղարկել—ուղարկել տալ, ասել—ասել տալ, խոսել խոսել տալ..., և մյուս կողմից պատճառական (մեծ մասամբ չեզոք բայերից կազմված)՝ հեռացնել հեռացնել տալ, բարձրացնել—բարձրացնել տալ, չորացնել—չորացնել տալ, մոտեցնել—մոտեցնել տալ, վազեցնել—վազեցնել տալ, թռցնել թռցնել տալ, իջեցնել —իջեցնել տալ, ինչպես նաև՝ խոսեցնել տալ, կարդացնել տալ, մոռացնել տալ, զգացնել տալ և այսպես մյուս բոլոր օրինակները։

Ծանոթություն.—Անցողականության տեսակետից, օրինակ՝ եռալ—եռացնել ձևերի միջև ֆունկցիոնալ տարբերությունը պարզ է. սկզբնականը (եռալ) անանցողական-չեզոք է, իսկ դրանից կազմված ձևը (եռացնել) անցողական է։ Այս տարբերությունն արտահայտվում է նրանով, որ երկրորդ ձևը (եռացնել) արդեն ընդունում է ուղղակի խնդիր (ջուր եռացնել)։ Այս ձևից էլ տալ բայի հարադրությամբ կազմված է եռացնել տալ բայակապակցությունը։ Այսպիսով, ուրեմն, ունենք միևնույն բայի, այսպես կոչված, եռակի ձևեր, այսպես՝ եռալ—եռացնել—եռացնել տալ. բարձրանալ բարձրացնել—բարձրացնել տալ. իջնել իջեցնել-իջեցնել տալ. պոկել-պոկեցնել-պոկեցնել տալ և նման շատ օրինակներ։ Դրանցից միջին ձևերը (եռացնել, բարձրացնել, իջեցնել, պոկեցնել և այլն) երկու զույգում էլ կան, այսպես՝ եռալ—եռացնել, եռացնել—եռացնել տալ. բարձրանալ—բարձրացնել, բարձրացնել—բարձրացնել տալ, իջնել—իջեցնել, իջեցնել—իջեցնել տալ և այլն։ Այստեղ՝ առաջին զույգի միավորների մեջ (եռալ-եռացնել) ֆունկցիոնալ տարբերությունը կախված է անցողականությունից (զույգի առաջին միավորը անանցողական է, մյուսը՝ անցողական), իսկ մյուս զույգի

[1] Այլև մոռանալ տալ ձևով՝ «...առժամանակ մոռանալ են տալիս ինձ այն սարսափելի դժվարությունները...» (Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. II, Երևան, 1955, էջ 519) կամ՝ «Աշխատանքը մոռանալ է տալիս սրտի կսկիծները» (Նույն տեղում, էջ 603) և այլն։

միավորների մեջ (եռացնել—եռացնել տալ) ֆունկցիոնալ տարբերությունը պատճառականությունից է կախված։ Ուիշտ է, անցողականության տեսակետից երկրորդ զույգի միավորները համագոր են իրար, մեկն էլ է անցողական, մյուսն էլ. սա էլ է պահանջում ուղղակի խնդիր, նա էլ։ Այդ պատճառով էլ, որքանով անցողականությունը ուղղակի խնդրից է կախված, այս նկատառումով երկրորդ զույգի միավորների միջև ոչ մի տարբերություն չկա։ Հարց է առաջ գալիս. մի՞թե ճիշտ է, որ անցողական-պատճառական և ներգործական ձևերը (եռացնել, իջեցնել, գրել, կարդալ), այսպես ասած, միակի անցողական են, իսկ բուն պատճառականները (եռացնել տալ, իջեցնել տալ, գրել տալ. կարդալ տալ կամ կարդացնել տալ)՝ կրկնակի անցողական։ Կրկնակի անցողական միայն այն ժամանակ կարող է լինել բայը, եթե նա երկու ուղղակի խնդիր ընդունի։ Եվ իրոք, երբ նայում ենք երկրորդ զույգի ձևերին, ապա այդ տարբերությունը զգալի է. այսպես, օրինակ՝ ջուր եռացնել, բեռ իջեցնել, նամակ գրել, գիրք կարդալ, բայց՝ մեկին ջուր եռացնել տալ, մշակին բեռ իջեցնել տալ, ընկերոջը նամակ գրել տալ, երեխային գիրք կարդացնել տալ և այլն։

Անցողական բայերից տալ բայի հարադրությամբ կազմված պատճառական ձևերի տարածումը գրական նոր հայերենում մեծապես արգելակում է -ցն (-ացն, -եցն) ածանցի լայն կիրառմանը անցողական-ներգործական բայերի վրա։ Այդ է պատճառը, որ -ցն (-ացն, -եցն) ածանցով անցողական-ներգործական բայերից շատ քիչ կրկնակի անցողական-պատճառական ձևեր են կազմվում այսօր գրական նոր հայերենում։

Այդպես չեն, սակայն, չեզոք և կրավորական չեզոք բայերը։ Սրանց մեծ մասը, ինչպես սկզբում էլ նշեցինք, կարող է ստանալ -ցն (-ացն, -եցն) ածանցը և կազմել անցողական-պատճառական ձևեր՝ մնալ—մնացնել, վազել—վազեցնել, նստել—նստեցնել, զարթնել—զարթեցնել, հասնել—հասցնել, բարկանալ—բարկացնել, չարանալ—չարացնել... գժվել—գժվեցնել, զզվել—զզվեցնել, հաշտվել—հաշտեցնել, սխալվել—սխալեցնել, սթափվել—սթափեցնել, զբաղվել—զբաղեցնել, հաջողվել—հաջողեցնել, թաքնվել—թաքցնել, հարմարվել—հարմարեցնել, համաձայնվել—համաձայնեցնել, տրաքվել—տրաքեցնել և նման այլ բազմաթիվ օրինակներ։

Սրանց նման նաև բնաձայնական արմատներից (կամ նրանց կրկնությունից) կազմված չեզոք բայերը՝ զրնգալ—զրնգացնել («բահերը զրնգացնելով դուրս էին եկնում»—ԱԲ. 502). թխկթխկալ—թխկթխկացնել («չոր ցեխից տախտակ դարձած գոգնոցը թխկթխկացնելով»—ԱԲ. 115). խշշալ—խշշացնել («քամին խշշացնում է չոր տերևները»—ԱԲ. 148). փոփոալ—փոփոացնել («մյուսը քամու առաջ փոփոացնում է կապույտ, կարմիր լաթերը»—ԱԲ. 149) փնչալ—փնչացնել («ձին կարմիր ռունգերը փնչացնում էր»—ԱԲ. 206). տկտկալ—տկտկացնել («մատիտի ծայրը տկտկացնելով սեղանին»—Զ. 227). շրխկալ—շրխկացնել («բաժակները բարձրացնել, որ իրար շրխկացնեն»—Զ. 28), չփչփալ—չփչփացնել («երևանն ախորժակով չփչփացրեց պառավը»—Թ. 156). ճլմփալ-ճլմփացնել («...ոտները կուաջրի մեջ ճլմփացնելով ներս ու դուրս էր անում, գոմը մաքրում»—ԱԲ. 61), քսալ—քսացնել («Բախշին քոշերը քքսացնելով մոտենում էր պայտարին»—ԱԲ. 348). փռնչալ—փռնչացնել («էշերը փռնչացնում էին քթածակերի փոշին»—ԱԲ. 427) և այլն։

Նման դեպքերում պատճառական ձևերը, որ սովորաբար կազմվում են չեզոք բայերից, մեծ մասամբ անցողական բայի իմաստ են արտահայտում։ Այս կարգի անցողական բայերի մոտ հաճախ չեն երևում այն հիմք ձևերը (սկզբնական չեզոք բայերը), որոնցից մի ժամանակ կազմվել են իրենք, ինչ-

պես, օրինակ՝ ծմացնել («...և շրթունքները ծմայնելով ոտները բարձրացրեց» Թ. 384), ծպպացնել («Տիգրանը շրթունքները ծպպացրեց»—Թ. 312), չթացնել («մատները մեկ-մեկ չթացնելով...»—Թ. 587)[1], չպացնել («ուրանը չպացնելով...»—Թ. 604), ամբացնել («գլուխը ամբացնում էին»—Թ. 682), ճթացնել («մատներն էր ճթացնում»—Թ. 795) և նման այլ օրինակներ, որոնք մեծ մասամբ բարբառային ձևեր են։

Այս կարգի մի շարք ձևերի մեջ -ացն ածանցն այնպես է մթագնած, որ անցողականության իմաստը բնավ չի երևում։ Նման դեպքերում առաջ է գալիս ձևի և բովանդակության (ֆունկցիայի) խզում կամ հակասություն, երբ այս կամ այն բայը ձևով անցողական-պատճառական է (-ացն ածանցով), իսկ իմաստով կամ ֆունկցիայով՝ չեզոք։ Այս կարգի պատճառական ձևերը իմաստով մոտենում են իրենց սկզբնական այն ձևերին (եթե այդպիսիք պահպանված են), որոնցից կազմված են դրանք։ Դրանցից են, օրինակ՝ փոքկալ և փոքկացնել («ոմանք էլ փոքթկացնում էին»—Զ. 107), խոմփալ և խոմփացնել («սկսեց ի լուր աշխարհի խոմփացնել»—Զ. 359), կլկլալ և կլկլացնել («քոռ Աթան համ թառ էր ածում, համ բլբուլի պես կլկլացնում»—ԱԲ. 397), բլբլալ և բլբլացնել («Իսկ Իվան բեյը ձիաճանճի պես պոկ չէր գալիս նրա կնոջից, բլբլացնում էր լեզվով և...»—ԱԲ. 397)[3], փոնչալ և փոնչացնել («Շարբշար կապած ձիերը փոնչացնելով ուտում էին հարդախառն գարին»—ԱԲ. 517), կտկտալ և կտկտացնել («ծառերի մթին խորքում սուր ձայնով կտկտացնում էր կտցահարը»—ԱԲ. 651), խոալ-խոացնել («Նրա ծառան... գլուխը կախ ձայնակցում էր տիրոջը՝ խռացնելով նրանից ավելի սաստիկ»—ԱԲ. 678), փնչալ և փնչացնել («հեգնանքով փնչացրեց Մացակը»—Զ. 487)։ Այս վերջինից էլ՝ փնչփնչալ և փնչփնչացնել «հաճախակի փնչալ, փնչացնել», և այլն (բոլորն էլ չեզոք առումով գործածվող բայաձևեր)։

Այսպես են նաև մի շարք այլ բայեր՝ խոխոալ և խոխոացնել («շատերը խոր քնի մեջ խոխոացնում էին»—ԱԲ. 419), խզզալ («Իսոյի կուրծքն էր խզզում»—ԱԲ. 532) և խզխզացնել («խոսելուց խզզացնում էր»—ԱԲ. 529)[4], կոկոալ («...որ այնտեղ գորտերը կոկոացին...»—Թ. 628) և կոկոացնել «կոկոալ», մշշալ և մշշացնել («նա խոր քնի մեջ մշշացնում էր»—ԱԲ. 542), կամ՝ մշմշալ և մըշմըշացնել «մշմշալու ձայն հանել», կմկմալ և կմկմացնել («կմկմացրել էր Հալկոն»—Թ. 719), սրբսրբալ և սրսրբացնել «ցրտից դողդողալ» և այլն։

Պարզ է, որ նման ձևերի մեջ միանգամայն հանդած է -ցն (-ացն, -եցն) ածանցի իմաստը։ Այդ պատճառով էլ զուգակից ձևերի մեջ պատճառականի ածանցը առաջ չի բերում պատճառական կերպի տարբերակում, ուստի այնպիսի զուգակից ձևեր, ինչպիսիք են, օրինակ, խոմփալ և խոմփացնել, գործ են ածվում որպես գրեթե իրար համազոր չեզոք ձևեր։

Այս տարբերակումը անհամեմատ շոշափելի է այն ժամանակ, երբ պատճառականի ածանցի կցումով զուգակից ձևերից մեկի մեջ առաջ է գալիս գոնե անցողականության գաղափարը (ինչպես, օրինակ՝ փոնչալ և փոնչացնել)։ Բայց այդպիսի դեպքերում էլ չեզոք բայերից (-ացն ածանցով) կազմված

[1] Թեև կա չթչթալ ձևը («բակում չթչթալով... վառվում էր օջախը» Թ. 638)։
[2] Տե՛ս Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»։
[3] Կա նաև՝ փլփլալ և փլփլացնել («Այս ամենը Բեկյանը այնպիսի արագությամբ էր փլփլացնում, որ ասես դիմացինի գլխին կարկուտ էր թափում»—Թ. 580)։
[4] Կա նաև՝ խղալ—խղացնել («բայց կենդանին դեռ խղացնում էր և...»—ԱԲ. 556)։

անցողական-պատճառական ձևերի մեջ մի տեսակ հանգած է պատճառակա-նի այն իմաստը, որ ենթական գործողությունը մեկ ուրիշին է կատարել տա-լիս, կամ այդ ուրիշի գործողության կամ եղելության պատճառը նույն ինքը՝ ենթական է։ Նման պատճառական ձևերը սովորաբար հանդես են գալիս ձևով որպես պատճառական, իսկ իմաստով որպես անցողական բայեր, հաճախ սո-վորական գործածական լինելով նրանց զուգակից՝ չեզոք ձևերը (որոնցից մի ժամանակ ծագել են իրենք)։

Հիշյալ բայերից են, օրինակ, փակցնել («Նորությունը այդ միտքը տախ-տակի վրա... փակցնելն է»—Զ. 84)՝ հին փակչել[1] չեզոք բայից. հատկացնել («Իսկ մյուսը հատկացրել է մորն ու երիտասարդ կնոջը»—Զ. 283)՝ հին յատ-կանալ բայից. յուրացնել («Նրա կարծիքով լավագույն նյութը Վեմյանը գոհ-կորեն յուրացրեց»—Զ. 311)՝ հին իւրանալ բայից. կասեցնել («Նրան հաջող-վեց ձիու ընթացքը մի անգամ էլ ետ կասեցնել հեղեղատի ուղղությամբ»—Զ. 15)՝ հին կասել բայից, այլև՝ շվացնել («Նրան տեսնելիս շվացնում էին»—Թ. 720), վավերացնել, լցնել (հին՝ լցուցանել բայից), հանրայնացնել, համայ-նացնել, կոլեկտիվացնել, մեքենայացնել, նորմալացնել, շարլոնացնել, գաղու-թացնել և այլն։

Ծանոթություն.—Արտաքին նմանություն ունի չափազանցնել բայը («Դրա պատճառականն է չափազանցացնել, տե՛ս Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացա-տական բառարան»)։ Արտաքին նմանություն ունեն նաև՝ մոբիլիզացնել, օկու-պացնել, էվակուացնել, կոմբինացնել և այլն։ Իսկ եզրակացնել բարդ բայի երկ-րորդ եզրը՝ կացնել ձևը կենալ բայի պատճառականն է, բայց քանի որ հիշյալ բարդության երկրորդ եզրում բոլորովին հանդես չի գալիս կենալ չեզոք բայը, ուստի եզրակացնել սովորական անցողական-ներգործական բայ է։

Վերջում մի քանի խոսք պատճառական բայերից կազմվող կրավորա-կան ձևերի մասին։

Անցողական-պատճառական ձևերից էլ կարելի է կազմել որոշ կրավո-րական ձևեր, ինչպես, օրինակ՝ մտնել—մտցնել—մտցվել, փայլել—փայլեցնել—փայլեցվել, իջնել—իջեցնել—իջեցվել, վերադառնալ—վերադարձնել—վերա-դարձվել, աճել—աճեցնել—աճեցվել, մոտենալ—մոտեցնել—մոտեցվել, բազ-մանալ—բազմացնել—բազմացվել։

Այս ձևով նաև ուրիշ օրինակներ (տեքստից)՝ հեռացնել—հեռացվել («Իրեն դրեց կոլխոզից հեռացվելու վտանգի առաջ»—Զ. 510). ամրացնել—ամրացվել («Որի ծայրը հաճախ ամրացված էր լինում»—Զ. 200), մերկաց-նել—մերկացվել («Նրա հակառակորդները մեկ-մեկ մերկացվում են»—Զ. 348), ներկայացնել—ներկայացվել («Ինչպես որ ներկայացված է Լևոնը»—Զ. 474), անցկացնել—անցկացվել («Ասեղին անց էր կացված մի քանի թարմ օղեր»—Զ. 505), համաձայնեցնել—համաձայնեցվել («Նախապես համաձայնեցված էր եղել Սանդարյանի հետ»—Զ. 231), զրաղեցնել—զրաղեցվել («Գոմի միայն կեսն էր զբաղեցված ազնվացեղ կովերով»—Զ. 506), ինչպես նաև՝ փակցնել—փակցվել («Պատի ամբողջ երկարությամբ փակցված գորգը»—Զ. 143), հատ-կացնել—հատկացվել («Բոլորը թողին իրենց բրիգադներին հատկացված տե-

[1] փակչել բայը գործ է ածվում և՛ նոր հայերենում, ինչպես, օրինակ՝ «գյուղը տգի պես փակչել էր հայրենի հանդին» (ԱԲ. 50), «կասես, որ բամփես գլխին, տափին կփակ-չի» (ԱԲ. 120), «և քրտինքից շապիկը փակչում էր յանջին» (ԱԲ.232), «և պինդ փակչել են հին հավատքին» (ԱԲ. 260) և այլն։

դերը»—Զ. 95), վերացնել—վերացվել («վերացված էր գլխավոր թշնամին»—Զ. 263), կասեցնել—կասեցվել և այլն, և այլն։

Ոչ միայն բազմաթիվ չեզոք բայերի, այլև որոշ անցողական-ներգործական բայերի պատճառականներից էլ կազմվում են կրավորականներ, այսպիսով առաջ գալով երրորդ, այսպես ասած, կրկնակի կրավորական ձևեր՝ մեկը ներգործականից (օրինակ՝ հիշել ու հիշվել), մեկն էլ նրա պատճառականից (հիշեցնել—հիշեցվել, օրինակ՝ «հիշեցվում է բոլորին»)։ Այսպես՝ մի կողմից՝ խմել—խմվել և մյուս կողմից՝ խմեցնել—խմեցվել («այստեղ ջուր չի խմեցվում»), հալել—հալվել և հալեցնել—հալեցվել, վարժել—վարժվել և վարժեցնել—վարժեցվել և այլն։

Բայց նման դեպքերում սովորաբար ներգործականի կրավորականը զուգադիպում է նրա պատճառականի կրավորականին. այդ տեղի է ունենում ա խոնարհման բայերի ժամանակ։ Նման բայերից են՝ զգալ—զգացվել և զգալ—զգացնել—զգացվել («օդում զգացվում է դարնանային բույրը»—Զ. 5), մոռանալ—մոռացվել և մոռանալ—մոռացնել—մոռացվել («Անուշ Ադամյանի տանը մոռացված նրա բլոկնոտը»—Զ. 425), իմանալ—իմացվել և իմանալ—իմացնել—իմացվել («...այն ժամանակ է միայն տարաձուլթյուն իմացվում»—Մ. 71), հասկանալ—հասկացվել և հասկանալ—հասկացնել—հասկացվել, կարդալ—կարդացնել—կարդացվել և այլն, ուր, իրոք որ, ներգործականի կրավորականը և նրա պատճառականի կրավորականը համընկնում են։

Սանոթություն.—Նմանօրինակ շատ դեպքերում պատճառական բայերը ստանալով -վ ածանցը՝ դառնում են պատճառականի կրավորական ձևեր։ Պատճառական բայերի անորոշ դերբայի հիմքից և ածանցը դուրս է ընկնում և ավելանում է կրավորականի -վ ածանցը (օրինակ՝ մտց-ն-ել—մտց-վ-ել, զգաց-ն-ել—զգաց-վ-ել առանձնաց-ն-ել—առանձնաց-վ-ել, մոտեց-ն-ել—մոտեց-վ-ել)։ Այս պատճառով էլ պատճառական բայերի կրավորական խոնարհումը զուգադիպում է ա խոնարհման անցողական-ներգործական պարզ ու կանոնավոր բայերի կրավորականի հետ, որ սովորաբար կազմվում է կատարյալի -աց հիմքից (զգալ—զգաց-, հասկան-ալ—հասկաց-, իման-ալ—իմաց-) և այլն[1]։

Սովորաբար պատճառական ձևերի ներկայի բնում հանդես է գալիս -ցն ածանցը (մտցնել, օրինակ՝ մտցնում եմ, մտցնելու եմ, մտցնեմ և այլն. զգացնել, բարձրացնել, մոտեցնել), իսկ կատարյալի բնում այն դառնում է -ցր (մտցրի, մտցրել եմ, մտցրած եմ, մտցրու և այլն. զգացրի, զգացրել եմ. բարձրացրի, բարձրացրել եմ. մոտեցրի, մոտեցրել եմ և այլն) և այլն։

Համառոտագրություններ

ԱԲ.— Ակսել Բակունց, Երկեր, 1955։
Զ.—Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1955։
Թ.—Գր. Թափալչյան, Ոսկե հովիտ, Երևան, 1955։
Մ.—Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. V, Երևան, 1954։
Ման.—Մ. Մանվելյան, Ընտիր երկեր, Երևան, 1947։
Ր.—Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. II, Երևան, 1950։
Փ.—Վրթ. Փափազյան, Ընտիր երկեր, Երևան, 1951։

[1] Չեզոք բայերի մեջ նման զուգադիպություն չի կարող լինել այն պարզ պատճառով, որ չեզոք բայերը կրավորական ձևեր չունեն։